

## Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Լորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի

**Ֆիզիկա (11 դասաժամ), բնագիտություն (0.5 դասաժամ), մաթեմատիկա (10.5 դասաժամ), անգլերեն (12.5 դասաժամ), կենսաբանություն (9.5 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (8 դասաժամ), աշխարհագրություն (6.5 դասաժամ), տեխնոլոգիա /տղաների (2.5 դասաժամ) տեխնոլոգիա աղջիկների (0.25 դասաժամ), ձեռնարկատիրություն (3 դասաժամ), հայոց եկեղեցու պատմություն (4.25 դասաժամ), շախմատ (1.5 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև գինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև սեպտեմբերի 20ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 26-ին՝ ժամը 15:00-ին, Լորի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ.Լոր փ.2, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել 098-78-07-53 հեռախոսահամարով: